Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1344[33]-24.02.2012-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի ապրիլի 4-ի ՀՕ-48 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 8-րդ մասը «հրապարակվում է» բառերից հետո լրացնել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 14-րդ մասում «Ինտերնետ ցանցում» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ առաջին ընթերցմամբ ընդունված «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եվ լրացում կատարելու մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին», «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Առևտրի եվ ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եվ լրացում կատարելու մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Անհատական տվյալների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Բանկերի եվ բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հակագնագցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կրթության պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Ներքին շուկայի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Պետական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վերահսկիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
		«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ		
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածում «նախարարության	Ընդունվել է	Նախագծի 3-րդ հոդվածում

		արտաբյուջետային հաշիվ» բառերը փոխարինել «նախարարության կողմից հավելյալ մատուցվող ծառայությունների դիմաց» բառերով:		«նախարարության արտաբյուջետային հաշիվ» բառերը փոխարինվել են «նախարարության կողմից հավելյալ մատուցվող ծառայությունների դիմաց» բառերով:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «կազմակերպում» բառից հետո լրացնել «և իրականացնում» բառերով, իսկ 7-րդ կետը հանել:	Ընդունվել է	Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «կազմակերպում» բառից հետո լրացվել է «և իրականացնում» բառերով, իսկ 7-րդ կետը հանվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «անձնագրի» բառից հետո լրացնել «կամ նույնականացման քարտի (այսուհետ՝ անձնագիր)» բառերով, իսկ 12-րդ մասից հանել «Հոդված 18-ում և» բառերը և 2-րդ նախադասությունը:	Ընդունվել է	Նախագծի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «անձնագրի» բառից հետո լրացվել է «կամ նույնականացման քարտի (այսուհետ՝ անձնագիր)» բառերով, իսկ 12-րդ մասից հանվել են «Հոդված 18-ում և» բառերը և 2-րդ նախադասությունը:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **Հոդված 1. « Պետական գրանցման ընթացքում լսումների առանձ-նահատկությունները** 1. Պետական գրանցման վարույթները որպես կանոն իրականացվում են առանց լսումների՝	Ընդունվել է	Նախագծի 20-րդ հոդվածը վերաշարադրվել է:

		որոշումներն ընդունելով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ: 2. Գրանցման գործընթացում իրականացվում են լսումներ, երբ առկա է այլ անձի գրավոր դիմում կամ հաստատված աղբյուր ունեցող այլ տեղեկություն, որը վիճարկում է պետական գրանցման համար էական որևէ փաստի գոյությունը կամ հավաստիությունը, բացառությամբ սույն հոդվածի 23-րդ մասով նախատեսված դեպքերի: Լսումները կարող են իրականացվել ինչպես որևէ անձի դիմումի հիման վրա, այնպես էլ գործակալության համապատասխան որոշման հիման վրա: 3. Լսումների միջոցով կարող են պարզվել և լսումների ժամանակ քննարկման առարկա դառնալ բացառապես պետական գրանցման վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները: 4. Լսումներ իրականացնելու հիմքերի առկայության դեպքում գործակալությունը ընդունում է որոշում, որը պետք է պարունակի լսումներ իրականացնելու հիմքերը, լսումների միջոցով պարզելու ենթակա փաստերի շրջանակը, լսումների իրականացման վայրը, ամիսը, օրը, ժամը: 5. Լսումների մասին որոշումը կայացնելու պահից կասեցվում է օրենքով սահմանված գրանցման ժամկետների ընթացքը՝ ոչ ավել քան քսան օր ժամկետով, որը կարող է երկարաձգվել ևս տաս օրով, եթե քսանօրյա ժամկետում հնարավոր չի եղել պարզել վիճելի հանգամանքները: Այս դեպքում ընդունվում է պատճառաբանված որոշում: 6. Լսումներ իրականացնելու մասին որոշումը		

		կազմվում է էլեկտրոնային փաստաթղթի միջոցով և ուղարկվում է դիմող անձի էլեկտրոնային հասցեին: Եթե լսումների իրականացման համար հիմք է ծառայել որևէ անձի դիմում, ապա որոշումն ուղարկվում է նաև տվյալ անձի էլեկտրոնային փոստի հասցեով: Որոշումը նաև հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: 7. Լսումների մասնակիցներն են՝ 1) պետական հաշվառման կամ պետական գրանցման համար դիմած անձը, սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դիմում բերող անձը 2) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել լսումների արդյունքում, 3) Այլ անձինք՝ վկաներ, փորձագետներ, թարգմանիչներ: 8. Լսումները բաց են, և դրանց ժամանակ կարող է ներկա գտնվել ցանկացած անձ: 9. Գործակալությունը, ելնելով արդյունավետության սկզբունքից, իրավասու է լսումներից հեռացնել ցանկացած անձի, եթե կգտնի, որ լսումները տվյալ անձի իրավունքների վրա ազդեցություն չեն ունենա, իսկ տվյալ անձի ներկայությունը լսումների ժամանակ խոչընդոտում է լսումների բնականոն ընթացքը: 10. Լսումները պետք է իրականացվեն լսումների մասին որոշման մեջ նշված ժամկետում, ինչը սակայն չի կարող ավելի ուշ լինել, քան լսումների մասին որոշումը ընդունելուց հետո հնգօրյա		

		ժամկետում: 11. Լսումներին որևէ անձի չներկայանալը, անկախ պատճառից, հիմք չէ լսումների հետաձգման համար: 12.Լսումները իրականացվում են նիստի ձևով: Լսումները պետք է ավարտվեն մեկ նիստի ընթացքում: Եթե նիստը չի ավարտվում ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում, ապա նիստը շարունակվում է հաջորդ աշխատանքային օրը՝ աշխատանքային օրվա սկզբից: 13. Լսումների միջոցով պարզելու ենթակա բոլոր հանգամանքները քննարկումից հետո գործակալությունը ավարտում է լսումները և վերադառնում գրանցման վարույթին՝ առանց առանձին ակտի ձևով որոշում ընդունելու: 14.Լսումներ իրականացնող մարմինը արձանագրում է քննարկումները: 15.Արձանագրությունը պետք է պարունակի՝ 1) լսումներ իրականացնող մարմնի անվանումը. 2) լսումներ իրականացնելու վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը. 3) լսումներին մասնակցած անձանց(երրորդ անձանց, այլ անձանց) անունը և ազգանունը՝ տվյալ գործում նրանց կարգավիճակի (դիմող, երրորդ անձ, վկա և այլն) նշմամբ. 4) քննարկվող հարցի հանգամանքների բովանդակությունը. 5) լսումների մասնակիցների և լսումների ժամանակ հանդես եկող այլ անձանց ելույթների համառոտ շարադրանքը. 16. Արձանագրությունը կարող է պարունակել նաև լրացուցիչ տեղեկություններ:		

		17.Եթե քննարկումը կատարվել է ընդմիջումներով, ապա պետք է նշվեն նաև ընդմիջման վերաբերյալ տեղեկությունները: Մի քանի քննարկումներ անցկացնելու դեպքում դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն: Արձանագրությանը կարող են կցվել հավելվածներ, այդ թվում՝ գործում առկա բոլոր փաստաթղթերի ցանկը՝ ըստ դրանք ներկայացրած լսումների մասնակիցների: 18. Գործակալությունը կարող է լսումները փոխարինել գրավոր եղանակով հանգամանքների պարզման ընթացակարգով (այսուհետ՝ գրավոր ընթացակարգ): Գրավոր ընթացակարգը կիրառելու դեպքում գործակալությունն այդ մասին ընդունում է որոշում՝ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, որն ուղարկվում է դիմումատուի էլեկտրոնային փոստի հասցեին, բողոք ներկայացրած անձի էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև հրապարակվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: 19. Որոշումը պետք է նշում պարունակի գրավոր ընթացակարգի կիրառման հիմքերի մասին, ինչպես նաև պարզման ենթակա փաստական հանգամանքների մասին: 20. Որոշման հրապարակման պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում ցանկացած անձ կարող է ներկայացնել գրավոր ապացույցներ որոշման մեջ նշված հանգամանքների վերաբերյալ: 21.Գործակալությունը ստանում է բոլոր ներկայացված ապացույցները և դրանց գնահատման		

		միջոցով որոշում կայացնում հանգամանքի հիմնավորված կամ չհիմնավորված լինելու մասին, ինչն էլ պետք է արտացոլվի վարչական վարույթի արդյունքում ընդունված որոշման մեջ: 22. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը հաստատում է լսումների և գրավոր ընթացակարգի իրականացման կարգը՝ հիմնվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն օրենքի պահանջների հիման վրա: 23. Եթե սույն օրենքով կամ այլ օրենքներով սահմանված պետական գրանցման իրականացման ժամկետը կազմում է ոչ ավել, քան հինգ աշխատանքային օր , ապա պետական գրանցման վարույթներն իրականացվում են առանց լսումների՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ, բացառությամբ սույն հոդվածի 24-րդ մասով նախատեսված դեպքի: 24. Որևէ անձի գրավոր դիմումի առկայության դեպքում, որի համաձայն գրանցման ներկայացված փաստաթղթերում զետեղված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, գրանցումը մերժելու ակնհայտ հիմքերի բացակայության դեպքում պարտադիր իրականացվում են լսումներ կամ գրավոր ընթացակարգ:»		
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 21-րդ հոդվածի 5-րդ մասը «հիմքեր» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն հոդվածի	Ընդունվել է:	Նախագծի 21-րդ հոդվածի 5-րդ մասը «հիմքեր» բառից հետո լրացվել է

		6-րդ մասով նախատեսված դեպքի,» բառերով, ինչպես նաև հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով. «6. Եթե կրկին ներկայացված փաստաթղթերում առկա են պետական գրանցումը կամ պետական հաշվառումը մերժելու այնպիսի հիմքեր, որոնք առկա էին փաստաթղթերի առաջին ներկայացման ժամանակ, սակայն դրանց մասին մատնանշված չէր մերժման որոշման մեջ, ապա անձը կարող է կրկին դիմել գործակալություն սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով:»:		«բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի,» բառերով, ինչպես նաև հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 6-րդ մասով. «6. Եթե կրկին ներկայացված փաստաթղթերում առկա են պետական գրանցումը կամ պետական հաշվառումը մերժելու այնպիսի հիմքեր, որոնք առկա էին փաստաթղթերի առաջին ներկայացման ժամանակ, սակայն դրանց մասին մատնանշված չէր մերժման որոշման մեջ, ապա անձը կարող է կրկին դիմել գործակալություն սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով:»:
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի 28-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված թերության առկայության դեպքում անձին անմիջապես հնարավորություն է տրվում շտկել կամ լրացնել ներկայացված փաստաթղթերը, որից հետո իրականացվում է հաշվառումը:	Ընդունվել է	Նախագծի 28-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված թերության առկայության դեպքում անձին անմիջապես հնարավորություն է տրվում շտկել կամ լրացնել

		4. Եթե անձը հրաժարվում է շտկել կամ լրացնել ներկայացված փաստաթղթերը, անձի դիմումն ընդունելու օրվանից՝ երկօրյա ժամկետում, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ անմիջապես, դիմումը գրավոր մերժվում է՝ մերժման հիմքի (հիմքերի) պարտադիր նշումով:»:		ներկայացված փաստաթղթերը, որից հետո իրականացվում է հաշվառումը: 4. Եթե անձը հրաժարվում է շտկել կամ լրացնել ներկայացված փաստաթղթերը, անձի դիմումն ընդունելու օրվանից՝ երկօրյա ժամկե-տում, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ անմիջապես, դիմումը գրավոր մերժվում է՝ մերժման հիմքի (հիմքերի) պարտադիր նշումով:»:
7.	ՀՀ կառավարություն	Նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Մահացած անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանումն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի նույնականացման համար բավարար ցանկացած տեղեկատվություն, մահվան փաստը հավաստող փաստաթուղթ և դրա պատճենը: Մահվան փաստը հավաստող փաստաթուղթը պատճենի հետ համադրվելուց հետո վերադարձվում է այն ներկայացնողին: 3. Անհայտ բացակայող անհատ ձեռնարկատիրոջ	Ընդունվել է	Նախագծի 30-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ. «2. Մահացած անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանումն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի նույնականացման համար բավարար ցանկացած տեղեկատվություն, մահվան փաստը հավաստող փաստաթուղթ և դրա պատճենը:

		հաշվառումից հանումն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի նույնականացման համար բավարար ցանկացած տեղեկատվություն և անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի որոշման պատճեն:»:		Մահվան փաստը հավաստող փաստաթուղթը պատճենի հետ համադրվելուց հետո վերադարձվում է այն ներկայացնողին: 3. Անհայտ բացակայող անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանումն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված անձի նույնականացման համար բավարար ցանկացած տեղեկատվություն և անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի որոշման պատճեն:»:
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 35-րդ հոդվածի 5-րդ մասում «լիարժեքություն» բառը փոխարինել «առկայությունը» բառով:	Ընդունվել է	Նախագծի 35-րդ հոդվածի 5-րդ մասում «լիարժեքություն» բառը փոխարինվել է «առկայությունը» բառով:
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «փաստաթղթերին» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքի.» բառերով:	Ընդունվել է	Նախագծի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «փաստաթղթերին» բառից հետո լրացվել է «, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված

				դեպքի.» բառերով:
10.	ՀՀ կառավարություն	Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ մասում «ամրագրված տեղեկությունները և» բառերը փոխարինել «նախատեսված» բառով:	Ընդունվել է	Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ մասում «ամրագրված տեղեկությունները և» բառերը փոխարինվել է «նախատեսված» բառով:
11.	ՀՀ կառավարություն	Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասից հանել «տեղեկատվությունը և» բառերը, իսկ 5-րդ մասում «լիարժեքությունը» բառը փոխարինել «առկայությունը» բառով:	Ընդունվել է	Նախագծի 42-րդ հոդվածի 1-ին մասից հանել «տեղեկատվությունը և» բառերը, իսկ 5-րդ մասում «լիարժեքությունը» բառը փոխարինվել է «առկայությունը» բառով:
12.	ՀՀ կառավարություն	Նախագծի 66-րդ հոդվածի 1-ին մասը «ներկայացնում» բառից հետո լրացնել «հայտարարագիր, որը պարունակում է» բառերով:	Ընդունվել է	Նախագծի 66-րդ հոդվածի 1-ին մասը «ներկայացնում» բառից հետո լրացվել է « հայտարարագիր, որը պարունակում է» բառերով
13.	ՀՀ կառավարություն	«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծի փաթեթում և «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթում	Ընդունվել է	Այդ կապակցությամբ 2 փաթեթներում առկա՝ «Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող և «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ նախատեսող օրենքների նախագծերը միավորվել

		առկա նախագծերը միացնել մեկ փաթեթի մեջ:		են:
14.	ՀՀ կառավարություն	Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. « Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» կետում «առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում ու մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 15-ը լիազոր մարմին է ներկայացնում թերթի մեկ օրինակը» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:»:	Ընդունվել է	Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» կետում «առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում ու մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 15-ը լիազոր մարմին է ներկայացնում թերթի մեկ օրինակը» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:»:
15.	ՀՀ կառավարություն	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Հոդված 1. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը	Ընդունվել է	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով.

		«հրապարակել» բառից առաջ լրացնել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:»:		«Հոդված 1. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը «հրապարակել» բառից առաջ լրացնել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:»:
		«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում «մամուլում» բառը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:»:	Ընդունվել է	«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասում «մամուլում» բառը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:»:
16.	ՀՀ կառավարություն	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն	Ընդունվել է	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության

		կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՆԱԽԱԳԻԾ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **ՕՐԵՆՔԸ** **«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 09-ի ՀՕ -177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 10-րդ մասում «մամուլում» բառը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով:		մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «ՆԱԽԱԳԻԾ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **ՕՐԵՆՔԸ** **«ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 09-ի ՀՕ -177-Ն օրենքի

		Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով: **Հոդված 3.** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1–րդ կետում ««Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից համատեղ սահմանված կարգով:» բառերով: **Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»:		(այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 10-րդ մասում «մամուլում» բառը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով: **Հոդված 2**. Օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ մասում «առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում» բառերը փոխարինել «http://www.azdarar.am հասցեով գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով: **Հոդված 3.** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3.1–րդ կետում ««Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից համատեղ սահմանված

				կարգով:» բառերով: **Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:»: